ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21 օգոստոսի 2018 թվականի N 133-Ա

Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի և հիմք ընդունելով *Ա. Հակոբյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Առնակ Ավետիսյանի* օգնական ***Անի Ռոբերտի Հակոբյանին*** 2018 թվականի օգոստոսի 21-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը *(վարչատնտեսական բաժնին)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 21
ք. Հրազդան